***Հավելված N 12***

ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳԻՐ
/ԱՆՁՆԱԳԻՐ/

Օտարերկրյա պետություններում ՀՀ դիվանագիտական ծառայության մարմինների գործունեության կազմակերպում և իրականացում

---

(Բյուջետային ծրագրի անվանումը)

## 1. ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳՐԱՅԻՆ ՏՎՅԱԼՆԵՐ

| 1.1ԾՐԱԳՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ՝ |
|---|
| Օտարերկրյա պետություններում ՀՀ դիվանագիտական ծառայության մարմինների գործունեության կազմակերպում և իրականացում |
| **1.2 ԾՐԱԳՐԻ ԴԱՍԻՉԸ՝** |
| 1128 |
| **1.3 ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՄԱՐՄԻՆԸ (ԲԳԿ)՝** |
| ՀՀ արտաքին գործերի նախարարություն |
| **1.4 ԾՐԱԳՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՍԿԻԶԲԸ՝** |
| Միջոցառում 11001 - Օտարերկրյա պետություններում և միջազգային կազմակերպություններում հավատարմագրված ՀՀ դիվանագիտական ծառայության մարմինների գործունեության իրականացում - **1991թ.**<br>Միջոցառում 12001 – ՆԱՏՕ-ում ՀՀ առաքելության գրասենյակի գործունեության ապահովում - **2016թ.** |
| **1.5 ԾՐԱԳՐԻ ԾՐԱԳՐԻ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԱՎԱՐՏԸ՝** |
| Միջոցառում 11001՝ շարունակական<br>Միջոցառում 12001՝ նախատեսվող ավարտը 2024թ. |
| **1.6 ԾՐԱԳՐԻ ՆԱԽՈՐԴ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐԸ՝** |
| Միջոցառում 11001 - Օտարերկրյա պետություններում և միջազգային կազմակերպություններում ՀՀ դիվանագիտական ծառայության մարմինների նպատակների և խնդիրների իրագործում<br>Միջոցառում 12001 - ՆԱՏՕ-ի նոր կենտրոնակայանի շենքի վերակառուցման աշխատանքների ծախսերի փոխհատուցման Հայաստանի Հանրապետության մասնաբաժին |

## 2. ԾՐԱԳՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

| *2.1 ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ՝* |
|---|
| Միջազգային ասպարեզում ՀՀ շահերի պաշտպանություն և դիրքորոշումների առաջ մղում |

**2.2 ԾՐԱԳՐԻ ՀԻՄՔԵՐԸ՝**

| Ծրագրի իրավական հիմքերը | Նկարագրությունը |
|---|---|
| ՀՀ Սահմանադրություն | Հոդված 13. Արտաքին քաղաքականությունը |

| | |
|---|---|
| | Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականությունն իրականացվում է միջազգային իրավունքի հիման վրա՝ բոլոր պետությունների հետ բարիդրացիական, փոխշահավետ հարաբերություններ հաստատելու նպատակով: |
| ՀՀ կառավարության կառուցվածքի և գործունեության մասին ՀՀ օրենք, Հավելված, Նախարարություններին վերապահված գործունեության հիմնական ոլորտները, 5-րդ կետ | «Արտաքին գործերի նախարարությունը մշակում և իրականացնում է արտաքին գործերի, դիվանագիտական ծառայության, միջազգային հարաբերություններում Հայաստանի Հանրապետության շահերի և իրավունքների ներկայացման, օտարերկրյա պետություններում Հայաստանի Հանրապետության քաղաքացիների և իրավաբանական անձանց իրավունքների ու օրինական շահերի պաշտպանության, Հայաստանի Հանրապետության միջազգային իրավապայմանագրային հարաբերությունների, **օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների հետ դիվանագիտական կամ հյուպատոսական հարաբերությունների իրականացման,** համաշխարհային քաղաքական և տնտեսական իրադրության, օտարերկրյա պետությունների արտաքին ու ներքին քաղաքականության, միջազգային կազմակերպությունների գործունեության վերլուծության հիման վրա համապատասխան առաջարկությունների ներկայացման, համաշխարհային և տարածաշրջանային հիմնախնդիրների լուծման գործում Հայաստանի Հանրապետության դերի բարձրացման, Հայաստանի Հանրապետության պետական արարողակարգի ապահովման, պետական մարմիններին իրենց գործունեության համար արտաքին քաղաքականության վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվությամբ ապահովման **ոլորտներում Կառավարության քաղաքականությունը**»: |
| ՀՀ օրենքը «Դիվանագիտական ծառայության մասին» | **Հոդված 3. Դիվանագիտական ծառայությունը**<br>1. Դիվանագիտական ծառայությունը մասնագիտական գործունեություն է, որը դիվանագիտական ծառայության մարմիններում |

| | |
|---|---|
| | իրականացնում են դիվանագետները սույն օրենքով և այլ իրավական ակտերով այդ մարմիններին վերապահված խնդիրների լուծման ու գործառույթների իրականացման նպատակով:<br>2. Դիվանագիտական ծառայությունը պետական ծառայության բաղկացուցիչ մասն է:<br><br>**Հոդված 4. Դիվանագիտական ծառայության խնդիրները**<br><br>1. Դիվանագիտական ծառայության խնդիրներն են՝ միջազգային իրավունքի հիման վրա բոլոր պետությունների հետ բարիդրացիական, փոխշահավետ հարաբերություններ հաստատելու նպատակով Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականությունն իրականացնելը, միջազգային հարաբերություններում Հայաստանի Հանրապետության շահերը և իրավունքները պատշաճ ու հետևողական ներկայացնելը, Հայաստանի Հանրապետության քաղաքացիների և իրավաբանական անձանց իրավունքներն ու օրինական շահերը պաշտպանելը:<br><br>**Հոդված 5. Դիվանագիտական ծառայության մարմինները**<br><br>1. Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ծառայության մարմիններն են՝<br>…<br>3) Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության՝ օտարերկրյա պետություններում գործող դիվանագիտական ծառայության մարմինները՝<br>ա. Հայաստանի Հանրապետության դեսպանությունները,<br>բ. միջազգային կազմակերպություններում Հայաստանի Հանրապետության մշտական ներկայացուցչությունները,<br>գ. Հայաստանի Հանրապետության հյուպատոսական հիմնարկները: |
| ՀՀ օրենքը «Հյուպատոսական | Հոդված 2 |

| | |
|---|---|
| ծառայության մասին» | Հայաստանի Հանրապետության հյուպատոսական հիմնարկներն օտարերկրյա պետություններում պաշտպանում են Հայաստանի Հանրապետության, նրա քաղաքացիների և իրավաբանական անձանց իրավունքներն ու օրինական շահերը: Հյուպատոսական հիմնարկները նպաստում են այլ պետությունների հետ Հայաստանի Հանրապետության բարեկամական հարաբերությունների զարգացմանը և բազմակողմանի կապերի ընդլայնմանը: |
| ՀՀ ԱԳՆ կանոնադրություն | 11. Նախարարությունն իր նպատակների և խնդիրների կենսագործման նպատակով իրականացնում է հետևյալ գործառույթները՝<br><br>3) ներկայացնում է Հայաստանի Հանրապետությունն օտարերկրյա պետություններում, միջազգային կազմակերպություններում և ինտեգրացիոն գործընթացներում, ապահովում է դրանց հետ պաշտոնական հարաբերությունները.<br><br>5)ապահովում է միջազգային կազմակերպություններում, համաժողովներին, խորհրդակցություններին և այլ հանդիպումներին Հայաստանի Հանրապետության ներկայացվածությունը.<br><br>15) ապահովում է հյուպատոսական գործունեության իրականացումը և այդ նպատակով կատարում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և միջազգային պայմանագրերով նախարարությանը վերապահված գործառույթները. |
| ՀՀ Կառավարության գործունեության 2021-2026թթ. ծրագիր /հաստատված ՀՀ կառավարության 2021թ. օգոստոսի 18-ի N 1363 - Ա որոշմամբ/ | 1.1 ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ<br>Կառավարության արտաքին քաղաքականության ուղենիշներն են Հայաստանի Հանրապետության պետական շահերի պաշտպանությունը, Արցախի ժողովրդի իրավունքների և անվտանգության ապահովումը, տարածաշրջանային խաղաղության հաստատումը, տարածաշրջանի ապաշրջափակումը և կայունությունը: Արտաքին և անվտանգային քաղաքականության առաջնահերթություններից է Ղարաբաղյան հիմնախնդրի խաղաղ և |

| | |
|---|---|
| | համապարփակ կարգավորումը ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահության ներքո՝ հայտնի սկզբունքների և տարրերի հիման վրա, Արցախի ժողովրդի անվտանգության ապահովումը, ինչպես նաև մշակութային ու կրոնական ժառանգության պահպանումը և հումանիտար խնդիրների լուծումը: Հայաստանի Հանրապետությունն օգտագործելու է իր ամբողջ ներուժը վերոնշյալ նպատակներին հասնելու համար՝ առաջնորդվելով պետական շահերով և հայ ժողովրդի իրավունքների պաշտպանության հրամայականով: |

**2.3 ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ (ԲԳԿ) ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՐՑՈՒՄ՝**

Ըստ Պետական կառավարման համակարգի մարմինների մասին օրենքի /2018 թվականի մարտի 23/, Հոդված 3, մաս 1-ին՝
Նախարարությունը մշակում և **իրականացնում է** իրեն վերապահված գործունեության ոլորտում Կառավարության քաղաքականությունը:

Ըստ «Դիվանագիտական ծառայության մասին» ՀՀ օրենքի՝ /23 մարտի, 2018 թվական/ Հոդված 7. Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությունը
1. Հայաստանի Հանրապետության **արտաքին գործերի նախարարությունը պետական կառավարման համակարգի լիազոր մարմինն է, որը** մշակում և **իրականացնում է Կառավարության արտաքին քաղաքականությունը**՝ սույն օրենքով և այլ օրենքներով իրեն վերապահված լիազորությունների շրջանակներում:

**2.4 ԾՐԱԳՐԻ ԹԻՐԱԽԱՅԻՆ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԸ ԵՎ ՄԱՏՈՒՑՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝**

Ծրագրի թիրախային շահառուները ՀՀ քաղաքացիներն են:

Մատուցվող հիմնական ծառայությունները՝
- ՀՀ կառավարության արտաքին քաղաքականության իրագործում դիվանագիտական ծառայության մարմինների միջոցով,
- Արտերկրում ՀՀ քաղաքացիների շահերի պաշտպանություն:

**2.5 ԾՐԱԳՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ՝**

| **Ծրագրի միջոցառման դասիչը** | **Ծրագրի միջոցառման անվանումը** | **Ծրագրի միջոցառման նկարագրությունը** | **Ծրագրի միջոցառման հիմնական շահառուները և փոխհատուցման շրջանակը** |
|---|---|---|---|
| 11001 | Օտարերկրյա պետություններում | Օտարերկրյա պետություններում և | ՀՀ քաղաքացիներ |

| | | | |
|---|---|---|---|
| | և միջազգային կազմակերպություններում հավատարմագրված ՀՀ դիվանագիտական ծառայության մարմինների գործունեության իրականացում | միջազգային կազմակերպություններում դիվանագիտական գործունեության միջոցով արտաքին գործերի բնագավառում ՀՀ Կառավարության քաղաքականության իրականացում, հյուպատոսական ծառայության մատուցում | |
| 12001 | ՆԱՏՕ-ում ՀՀ առաքելության գրասենյակի գործունեության ապահովում | ՆԱՏՕ-ի նոր կենտրոնակայանում գործընկեր երկրների համար նախատեսված մասնաշենքում հիմնանորոգման ծախսերի փոխհատուցում՝ Հայաստանին տրամադրված տարածքի մասնաբաժնի մասով | ՆԱՏՕ-ի կենտրոնակայանում ՀՀ մշտական ներկայացուցչություն |
| **2.6 ԾՐԱԳՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՀԻՄՔՈՒՄ ԴՐՎԱԾ ԾԱԽՍԵՐԻ ԲՆՈՒՅԹԸ** | | | |
| Միջոցառման անվանումը | Պարտադիր կամ հայեցողական պարտավորությունների շրջանակը | Պարտադիր պարտավորության շրջանակներում գործադիր մարմնի հայեցողական իրավասությունների շրջանակները | Պարտադիր կամ հայեցողական պարտավորությունը սահմանող օրենսդրական հիմքերը |
| Պարտադիր ծախսերին դասվող միջոցառումներ, այդ թվում՝ | | | |
| Օտարերկրյա պետություն-ներում և միջազգային կազմակերպություններում հավատարմագրված ՀՀ դիվանագի | Միջազգային հարաբերություններում ՀՀ շահերի և իրավունքների ներկայացում, պաշտպանություն:<br><br>Օտարերկրյա պետություններում | Դիվանագիտական ծառայության մարմինների թիվը օտարերկրյա պետություններում:<br><br>Դիվանագիտական ծառայության մարմինների պահպանման ծախսերի ծավալը | ՀՀ կառավարության կառուցվածքի և գործունեության մասին ՀՀ օրենք, Հավելված, Նախարարություններին վերապահված գործունեության հիմնական ոլորտները, 5-րդ կետ |

| | | | |
|---|---|---|---|
| տական ծառայության մարմինների գործունեության իրականացում | ՀՀ քաղաքացիների և իրավաբանական անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանություն, հյուպատոսական ծառայությունների մատուցում:<br><br>ՀՀ միջազգային իրավապայմանագրային հարաբերությունների, օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների հետ դիվանագիտական պահպանում և զարգացում: | | Դիվանագիտական ծառայության մասին ՀՀ օրենք, 10-րդ և 51-րդ հոդվածներ |
| ՆԱՏՕ-ում ՀՀ առաքելության գրասենյակի գործունեության ապահովում | ՆԱՏՕ-ի հետ քաղաքական երկխոսության շարունակում, ՀՀ-ՆԱՏՕ անհատական գործընկերության գործողությունների ծրագրի հետևողական իրագործում: | Գրասենյակի ընտրություն:<br>Աշխատակիցների թվաքանակ: | ՀՀ կառավարության կառուցվածքի և գործունեության մասին ՀՀ օրենք, Հավելված, Նախարարություններին վերապահված գործունեության հիմնական ոլորտները, 5-րդ կետ<br><br>Հայաստան-ՆԱՏՕ ԱԳԳԾ<br><br>ՀՀ ԱԳՆ կանոնադրություն, 11-րդ կետ |

| 2.7 ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՂԱՆԱԿԸ (ՄԻՋՈՑՆԵՐԸ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿԸ) |
|---|
| Ծրագրի իրականացնողներն՝ արտերկրում ՀՀ դիվանագիտական ծառայության մարմինները, Բրուսելում ՆԱՏՕ-ի կենտրոնակայանում ՀՀ առաքելության գրասենյակ |

## 3. ԾՐԱԳՐԻ ԱՐԴՅՈՒՆՔԱՅԻՆ (ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ) ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ

| 3.1 ԾՐԱԳՐԻ ՎԵՐՋՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ՝ | | |
|---|---|---|
| **Վերջնական արդյունքի չափորոշիչը** | **Չափման միավորը** | **Հղումներ չափորոշիչը նկարագրող մանրամասն աղյուսակին** |
| Երկկողմ և բազմակողմ միջազգային հարաբերություններում ՀՀ մասնակցություն, դիրքորոշումների ներկայացում, օտարերկրյա պետություններում ՀՀ քաղաքացիների և իրավաբանական անձանց շահերի պաշտպանություն | տոկոս | Աղյուսակ 1 |

| 3.2 ԾՐԱԳՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ՝ | | | | |
|---|---|---|---|---|
| **Միջոցառման դասիչը** | **Միջոցառման անվանումը** | **Միջոցառման արդյունքի չափորոշիչը** | **Չափման միավորը** | **Հղումներ չափորոշիչը նկարագրող մանրամասն աղյուսակին** |
| 11001 | Օտարերկրյա պետություններում և միջազգային կազմակերպություններում հավատարմա-գրված ՀՀ դիվանագիտա-կան ծառայության մարմինների գործունեության իրականացում | Օտարերկրյա պետություններում գործող ՀՀ դիվանագիտական ծառայության մարմիններ (բացառությամբ մասնագիտացված միջազգային կազմակերպություններում ՀՀ ներկայացուցիչների և ներկայացուցչությունների) | հատ | Աղյուսակ 2 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | Օտարերկրյա պետություններում գործող դիվանագիտական ծառայության մարմինների կողմից սպասարկված ՀՀ քաղաքացիների և իրավաբանական անձանց իրավունքների ու օրինական շահերի պաշտպանություն, հյուպատոսական սպասարկում ստացած անձինք | անձ | |
| | | Դիվ. ծառայության մարմնի մասնակցությամբ հավատարմագրման պետության (միջազգային կազմակերպության) լրատվամիջոցներում Հայաստանի մասին հրապարակումներ, ներկայացուցչության ղեկավարի՝ տեղական և հայաստանյան լրատվամիջոցներին տրված հարցազրույցներ | հատ | |
| | | Դիվ. ծառայության մարմնի ղեկավարի (ներկայացուցչի) հանդիպումներ, ելույթներ, դասախոսություններ հավատարմագրման պետության ուսումնական և | հատ | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | գիտական հաստատություններում | | |
| | | Դիվ. ծառայության մարմնի ղեկավարի (ներկայացուցչի) հանդիպումներ, ելույթներ հավատարմագրման պետությունում գործող արտաքին քաղաքականության ոլորտի ոչ-կառավարական կազմակերպությունների, Think tank-երի միջոցառումներին | հատ | |
| | | Հայաստանի տնտեսական հնարավորությունների մասին իրազեկվածության բարձրացմանը և առևտրատնտեսական ոլորտին նվիրված միջոցառումներ | հատ | |
| | | Հավատարմագրման պետությունում Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի մասին իրազեկվածության բարձրացմանն ուղղված միջոցառումներ (ցուցահանդես, ֆիլմերի ցուցադրություն և այլն) | հատ | |
| | | Հավատարմագրման պետության և | հատ | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | Հայաստանի տարածքային կառավարման և ինքնակառավարման մարմինների միջև համագործակցության հաստատում (համագործակցող ՏԿ և ՏԻՄ քանակ) | | |
| | | Միջազգային կազմակերպությունների շրջանակներում Հայաստանի քաղաքական օրակարգի հետ ուղղակի կամ անուղղակի առնչություն ունեցող նախաձեռնություններ | հատ | |
| | | Միջազգային կազմակերպությունների արդյունավետության բարձրացմանն ուղղված նախաձեռնություններ | հատ | |
| | | ՀՀ ԱԳՆ մասնակցությամբ՝ գենդերային հավասարությանը և կանանց իրավունքների պաշտպանությանն ողղված միջազգային նախաձեռնություններ (այդ թվում միջազգային կոնֆերանսների և | հատ | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | սեմինարների մասնակցություն) | | |
| | | Օտարերկրյա պետություններում դիվանագիտական ծառայության մարմիններում աշխատակիցների կին/տղամարդ հարաբերակցություն | տոկոս | |
| | | Արտերկրում հավատարմագրված ՀՀ դեսպաններ. կին/տղամարդ հարաբերակցություն | տոկոս | |
| | | Միջազգային կազմակերպություններում ՀՀ մշտական ներկայացուցչությունների ղեկավարներ. կին/տղամարդ հարաբերակցություն | տոկոս | |
| | | Արտերկրում ՀՀ գլխավոր հյուպատոսությունների ղեկավարներ. կին/տղամարդ հարաբերակցություն | տոկոս | |
| | | Դեսպանընկալ պետության իշխանությունների և այդ պետությունում հավատարմագրված դեսպանությունների ու միջազգային կազմակերպությունների հետ հարաբերություններում ներգրավվածության ապահովում | տոկոս | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | Օտարերկրյա պետություններում գործող դիվանագիտական ծառայության մարմինների կողմից սպասարկված ՀՀ քաղաքացիների և իրավաբանական անձանց իրավունքների ու օրինական շահերի պաշտպանություն, սպասարկված անձանց քանակ | տոկոս | |
| **12001** | ՆԱՏՕ-ում ՀՀ առաքելության գրասենյակի գործունեության ապահովում | ՆԱՏՕ-ի նոր կենտրոնակայանում գործընկեր երկրների համար նախատեսված մասնաշենքում ՀՀ առաքելության գրասենյակի մակերես | ք.մ. | Աղյուսակ 3 |
| | | Գրասենյակի ծառայության կանխատեսվող ժամկետը | տարի | |

## 4. ԾՐԱԳՐԻ ԱՐԴՅՈՒՆՔԱՅԻՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԻ ՄԱՆՐԱՄԱՍՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

### 4.1 Աղյուսակ 1

| **Չափորոշիչի նկարագրությունը** | |
|---|---|
| **Չափորոշիչի անվանումը (հապավումը)** | Երկկողմ և բազմակողմ միջազգային հարաբերություններին ՀՀ մասնակցություն, դիրքորոշումների ներկայացում, օտարերկրյա պետություններում ՀՀ քաղաքացիների և իրավաբանական անձանց շահերի պաշտպանություն: |
| **Կիրառման ոլորտ/տարածքը** | -ՀՀ հետ դիվանագիտական հարաբերություններ հաստատած երկրներ |

| | |
|---|---|
| | -Միջազգային կազմակերպություններ, որոնց անդամակցում է ՀՀ-ը<br>- Երկկողմ և բազմակողմ արտաքին հարաբերությունների ոլորտ |
| **Սահմանումը** | Արտաքին հարաբերությունների երկկողմ և բազմակողմ ձևաչափերում ՀՀ դիրքորոշումների առաջմղման, շահերի պաշտպանվածության մակարդակ: |
| **Չափման միավորը** | Տոկոս |
| **Տեսակ/տիպը** | Ցուցանիշը որակական է, վերջնական արդյունք՝ երկկողմ և բազմակողմ միջազգային հարթակներում գործունեության ծավալում և օտարերկրյա պետություններում ՀՀ քաղաքացիների և իրավաբանական անձանց շահերի պաշտպանության ապահովում: |
| **Ներկայացման բացվածքը/կառուցվածքը** | Չափորոշիչը կիրառման բավվածքը՝ երկկողմ և բազմակողմ հարաբերություններում ծավալվող ՀՀ գործունեությունն է: |
| **Տվյալների ստացումը** | |
| **Տվյալների հավաքագրման մեթոդը** | Համապատասխան տվյալները տրամադրում են ՀՀ դիվանագիտական ծառայության մարմինների կողմից և ամփոփվում է ԱԳՆ կենտրոնական ապարատում: |
| **Տվյալների հավաքագրման հաճախականությունը կամ ժամկետները** | Տարեկան |
| **Պատասխանատու միավորը** | ՀՀ ԱԳՆ |
| **Տվյալների ստացման հետ կապված ծախսերի գնահատական** | Լրացուցիչ ծախսեր չեն պահանջվում: |
| **Այլ նշումներ** | |
| **Ցուցանիշի ելակետային տվյալը** | 80% |
| **Հենանիշային (benchmark) ցուցանիշները** | 100% |
| **Թիրախային ցուցանիշը** | 100% |
| **Սահմանափակումները** | - |
| **Այլ** | - |

### 4.2 Աղյուսակ 2

| Չափորոշիչի նկարագրությունը | |
|---|---|
| **Չափորոշիչի անվանումը (հապավումը)** | Օտարերկրյա պետություններում գործող ՀՀ դիվանագիտական ծառայության մարմինների քանակ |
| **Կիրառման ոլորտ/տարածքը** | ՀՀ երկկողմ և բազմակողմ հարաբերություններ, արտերկրում ՀՀ դիվանագիտական ծառայության մարմիններ |
| **Սահմանումը** | Օտարերկրյա պետություններում գործող ՀՀ դիվանագիտական ծառայության մարմինների քանակ (բացառությամբ մասնագիտացված միջազգային կազմակերպություններում ՀՀ ներկայացուցիչների և ներկայացուցչությունների) |
| **Չափման միավորը** | Հատ |
| **Տեսակ/տիպը** | Օտարերկրյա պետություններում և միջազգային կազմակերպություններում հավատարմագրված ՀՀ դիվանագիտական ծառայության մարմինների գործունեության ապահովում |
| **Ներկայացման բացվածքը/կառուցվածքը** | -Արտերկրում գործող ՀՀ դեսպանությունների քանակ<br>-Արտերկրում գործող ՀՀ գլխավոր հյուպատոսությունների քանակ<br>- Միջազգային կազմակերպություններում (բացառությամբ մասնագիտացված միջազգային կազմակերպությունների) ՀՀ ներկայացուցիչների և ներկայացուցչությունների քանակ |
| **Տվյալների ստացումը** | |
| **Տվյալների հավաքագրման մեթոդը** | Դիվանագիտական ծառայության մարմնի հիմնադրման վերաբերյալ երկկողմ համաձայնագրերի, ՀՀ կառավարության համապատասխան որոշումների հաշվառում |
| **Տվյալների հավաքագրման հաճախականությունը կամ ժամկետները** | Տարեկան |
| **Պատասխանատու միավորը** | ՀՀ ԱԳՆ |

| | |
|---|---|
| **Տվյալների ստացման հետ կապված ծախսերի գնահատական** | Լրացուցիչ ծախսեր չեն պահանջվում: |
| **Այլ նշումներ** | |
| **Ցուցանիշի ելակետային տվյալը** | 62 |
| **Հենանիշային (benchmark) ցուցանիշները** | 64 |
| **Թիրախային ցուցանիշը** | 64 |
| **Սահմանափակումները** | - |
| **Այլ** | - |

**4.3 Աղյուսակ 3**

| | |
|---|---|
| **Չափորոշիչի նկարագրությունը** | |
| **Չափորոշիչի անվանումը (հապավումը)** | ՆԱՏՕ-ի նոր կենտրոնակայանում գործընկեր երկրների համար նախատեսված մասնաշենքում ՀՀ առաքելության գրասենյակի մակերես,<br>Գրասենյակի ծառայության կանխատեսվող ժամկետը |
| **Կիրառման ոլորտ/տարածքը** | ՀՀ-ՆԱՏՕ գործընկերություն,<br>ՆԱՏՕ-ի նոր կենտրոնակայանում գործընկեր երկրների համար նախատեսված մասնաշենքում ՀՀ առաքելություն |
| **Սահմանումը** | ՆԱՏՕ-ի նոր կենտրոնակայանում գործընկեր երկրների համար նախատեսված մասնաշենքում ՀՀ առաքելության գրասենյակի մակերես և գրասենյակի շահագործման ժամկետ |
| **Չափման միավորը** | Ք.մ., տարի |
| **Տեսակ/տիպը** | Քանակական, ժամկետայնության;<br>ՆԱՏՕ-ի նոր կենտրոնակայանում գործընկեր երկրների համար նախատեսված մասնաշենքում ՀՀ առաքելության գրասենյակի շահագործում սահմանված ժամկետում |
| **Ներկայացման բացվածքը/կառուցվածքը** | Կիրառելի չէ |
| **Տվյալների ստացումը** | |
| **Տվյալների հավաքագրման մեթոդը** | Համաձայն ՀՀ ԱԳՆ-ՆԱՏՕ երկկողմ գրավոր համաձայնության, ՆԱՏՕ-ում ՀՀ մշտական ներկայացուցչության կողմից տրամադրվող տեղեկատվության |

| | |
|---|---|
| **Տվյալների հավաքագրման հաճախականությունը կամ ժամկետները** | Մեկանգամյա |
| **Պատասխանատու միավորը** | ՀՀ արտաքին գործերի նախարարությունը |
| **Տվյալների ստացման հետ կապված ծախսերի գնահատական** | Լրացուցիչ ծախսեր չեն պահանջվում |
| **Այլ նշումներ** | |
| **Ցուցանիշի ելակետային տվյալը** | 114 ք.մ, 20 տարի |
| **Հենանիշային (benchmark) ցուցանիշները** | 114 ք.մ, 20 տարի |
| **Թիրախային ցուցանիշը** | 114 ք.մ, 20 տարի |
| **Սահմանափակումները** | |
| **Այլ** | |

**ՏԵՂԵԿԱՆՔ**
**ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳՐԻ**

## 5. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

**5.1ԾՐԱԳՐԻ ՆԵՐԿԱ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ՝**

1991թ. ի վեր Հայաստանի Հանրապետությունը դիվանագիտական հարաբերություններ է հաստատել 179 պետության հետ (2023թ.), անդամակցում է 110 միջազգային կազմակերպության, այդ թվում՝ մասնագիտացված մարմինների, ծրագրերի, կոնվենցիաների և միջազգային հանրության կողմից ընկալվում է որպես կանխատեսելի և հուսալի գործընկեր: Արտերկրում ՀՀ-ն ունի 43 ռեզիդենտ դեսպան, ովքեր հավատարմագրված են ընդհանուր առմամբ 90 երկրում: ՀՀ մշտական ներկայացուցիչներ են նշանակված 19 միջազգային կազմակերպություններում, արտերկրում գործում են 10 ՀՀ գլխավոր հյուպատոսություն, 2 հյուպատոսական գրասենյակ և 59 պատվավոր հյուպատոս: Ծրագիրն ուղղված է միջազգային ասպարեզում ՀՀ շահերի պաշտպանությանը և դիրքորոշումների առաջ մղմանը:

**5.2 ԾՐԱԳՐԻ ՎԵՐՋՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԻ ԹԻՐԱԽԱՅԻՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ `**

| Վերջնական արդյունքի չափորոշիչը | Ցուցանիշը | Ժամկետը |
|---|---|---|
| Օտարերկրյա պետություններում գործող ՀՀ դիվանագիտական ծառայության մարմիններ | 67 | 2023թ. |

| | | |
|---|---|---|
| (բացառությամբ մասնագիտացված միջազգային կազմակերպություններում ՀՀ ներկայացուցիչների և ներկայացուցչությունների) | | |

## 5.3 ԾՐԱԳՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔԱՅԻՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ՝

| **Միջոցառման դասիչը** | **Միջոցառման անվանումը** | **Արդյունքի չափորոշիչը** | **ՖՏ-2** | **ՖՏ-1** | **ՖՏ** | **Ֆ+1** | **ՖՏ+2** |
|---|---|---|---|---|---|---|---|
| 11001 | Օտարերկրյա պետություններում և միջազգային կազմակերպություններում հավատարմագրված ՀՀ դիվանագիտական ծառայության մարմինների գործունեության իրականացում | Օտարերկրյա պետություններում գործող ՀՀ դիվանագիտական ծառայության մարմիններ (բացառությամբ մասնագիտացված միջազգային կազմակերպություններում ՀՀ ներկայացուցիչների և ներկայացուցչությունների), հատ | 62 | 64 | 64 | 64 | 64 |
| | | Օտարերկրյա պետություններում գործող դիվանագիտական ծառայության մարմինների կողմից սպասարկված ՀՀ քաղաքացիների և իրավաբանական անձանց իրավունքների ու օրինական շահերի պաշտպանություն, հյուպատոսական | 123391 | 95000 | 95000 | 95000 | 95000 |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | սպասարկում ստացած անձինք | | | | | |
| | | Դիվ. ծառայության մարմնի մասնակցությամբ հավատարմագրման պետության (միջազգային կազմակերպության) լրատվամիջոցներում Հայաստանի մասին հրապարակումներ, ներկայացուցչության ղեկավարի՝ տեղական և հայաստանյան լրատվամիջոցներին տրված հարցազրույցներ, հատ | 2242 | 687 | 687 | 687 | 687 |
| | | Դիվ. ծառայության մարմնի ղեկավարի (ներկայացուցչի) հանդիպումներ, ելույթներ, դասախոսություններ հավատարմագրման պետության ուսումնական և գիտական հաստատություններում, հատ | 2436 | 1745 | 1745 | 1745 | 1745 |
| | | Դիվ. ծառայության մարմնի ղեկավարի (ներկայացուցչի) | 487 | 413 | 413 | 413 | 413 |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | հանդիպումներ, ելույթներ հավատարմագրման պետությունում գործող արտաքին քաղաքականության ոլորտի ոչ-կառավարական կազմակերպությունների, Think tank-երի միջոցառումներին, հատ | | | | | |
| | | Հայաստանի տնտեսական հնարավորությունների մասին իրազեկվածության բարձրացմանը և առևտրատնտեսական ոլորտին նվիրված միջոցառումներ, հատ | 663 | 437 | 437 | 437 | 437 |
| | | Հավատարմագրման պետությունում Հայաստանի և Արցախի մասին իրազեկվածության բարձրացմանն ուղղված միջոցառումներ (ցուցահանդես, ֆիլմերի ցուցադրություն և այլն), հատ | 754 | 562 | 562 | 562 | 562 |
| | | Հավատարմագրման պետության և Հայաստանի տարածքային | 166 | 143 | 143 | 143 | 143 |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | կառավարման և ինքնակառավարման մարմինների միջև համագործակցության հաստատում (համագործակցող ՏԿ և ՏԻՄ քանակ), հատ | | | | | |
| | | Միջազգային կազմակերպությունների շրջանակներում Հայաստանի քաղաքական օրակարգի հետ ուղղակի կամ անուղղակի առնչություն ունեցող նախաձեռնություններ,հատ | 943 | 948 | 948 | 948 | 948 |
| | | Միջազգային կազմակերպություն-ների արդյունավետության բարձրացմանն ուղղված նախաձեռնություններ,հատ | 342 | 218 | 218 | 218 | 218 |
| | | ՀՀ ԱԳՆ մասնակցությամբ՝ գենդերային հավասարությանը և կանանց իրավունքների պաշտպանությանն ողղված միջազգային նախաձեռնություն | 100 | 75 | 75 | 75 | 75 |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | ներ (այդ թվում միջազգային կոնֆերանսների և սեմինարների մասնակցություն), հատ | | | | | | |
| | | Օտարերկրյա պետություններում դիվանագիտական ծառայության մարմիններում աշխատակիցների կին/տղամարդ հարաբերակցություն, տոկոս | 27.6/72.4 | | | | | |
| | | Արտերկրում հավատարմագրված ՀՀ դեսպաններ. կին/տղամարդ հարաբերակցություն, տոկոս | 14/86 | | | | | |
| | | Միջազգային կազմակերպություններում ՀՀ մշտական ներկայացուցչությունների ղեկավարներ. կին/տղամարդ հարաբերակցություն, տոկոս | 0/100 | | | | | |
| | | Արտերկրում ՀՀ գլխավոր հյուպատոսությունների ղեկավարներ. կին/տղամարդ հարաբերակցություն, տոկոս | 0/100 | | | | | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | Դեսպանընկալ պետության իշխանություններ ի և այդ պետությունում հավատարմագրվ ած դեսպանություննե րի ու միջազգային կազմակերպությու նների հետ հարաբերությունն երում ներգրավվածությ ան ապահովում, տոկոս | 100 | 100 | | | |
| | | Օտարերկրյա պետություններում գործող դիվանագիտակա ն ծառայության մարմինների կողմից սպասարկված ՀՀ քաղաքացիների և իրավաբանական անձանց իրավունքների ու օրինական շահերի պաշտպանություն , սպասարկված անձանց քանակ, տոկոս | 100 | 100 | | | |
| 12001 | ՆԱՏՕ-ում ՀՀ առաքելությ ան գրասենյակի գործունեու- | ՆԱՏՕ-ի նոր կենտրոնակայան ում գործընկեր երկրների համար նախատեսված մասնաշենքում ՀՀ առաքելության | 114 | 114 | 114 | 114 | 114 |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | թյան ապահովում | գրասենյակի մակերես | | | | | |
| | | Գրասենյակի ծառայության կանխատեսվող ժամկետը | 20 | 20 | 20 | 20 | 20 |

**5.4 ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԺԵՔԸ (հազ.դրամ)՝**

| Միջոցառման դասիչը | Միջոցառման անվանումը | ՖS-2 | ՖS-1 | ՖS | Ֆ+1 | ՖS+2 |
|---|---|---|---|---|---|---|
| 11001 | Օտարերկրյա պետություններում և միջազգային կազմակերպություններում հավատարմագրված ՀՀ դիվանագիտական ծառայության մարմինների գործունեության իրականացում | 12014421.52 | 11410205.20 | 11815703.00 | 11948091.57 | 11948091.57 |
| 12001 | ՆԱՏՕ-ում ՀՀ առաքելության գրասենյակի գործունեության ապահովում | 11802.60 | 18950.00 | 18950.00 | 0 | 0 |
| ***Ընդամենը ծրագիր*** | | 12026224.12 | 11429155.20 | 11834653.00 | 11948091.57 | 11948091.57 |

**5.5 ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ (հազ.դրամ)՝**

| Ֆինանսավորման աղբյուրներ | ՖS-2 | ՖS-1 | ՖS | Ֆ+1 | ՖS+2 |
|---|---|---|---|---|---|
| ՀՀ պետական բյուջե | 12026224.12 | 11429155.20 | 11834653.00 | 11948091.57 | 11948091.57 |
| Արտաբյուջետային ֆոնդեր | | | | | |
| Այլ | | | | | |
| **Արտաքին աղբյուրներ, որից** | | | | | |
| Նվիրատու կազմակերպություններ | | | | | |
| Այլ | | | | | |
| ՀՀ պետական բյուջե | | | | | |
| Արտաբյուջետային ֆոնդեր | | | | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| **Ընդամենը բոլոր աղբյուրների գծով** | 12026224.12 | 11429155.20 | 11834653.00 | 11948091.57 | 11948091.57 |

| |
|---|
| **5.6 ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ՝** |
| |